ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արագածոտնի մարզի գ. Քուչակի մշակույթի տան ավարտման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման նպատակով կազմակերպված ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/8 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2016 թվականի սեպտեմբերի 24-ին կնքված N ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/8 պայմանագրում 2018 թվականի դեկտեմբերի 19-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	N 1 Կատարողի՝ <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ-ի կողմից ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացրած գրություն կանխավճար տրամադրելու վերաբերյալ և պատասխանատու ստորաբաժանման համաձայնությունը:
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրի 14.02.2018թ. կնքված N 4 համաձայնագրի 1-ին կետում ավելացնվել է նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ. <<1.1.3 2018 թվականի համար վճարման ենթակա գումարից մինչև 1534000 (մեկ միլիոն հինգ հարյուր երեսունչորս հազար) ՀՀ դրամի չափով՝ կանխավճարի ապահովման բանկային երաշխիք ներկայացնելուց հետո Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով՝ ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության ամբողջ գումարի չափով:>>:
Փոփոխության հիմնավորում	N ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/8 պայմանագրի 7.5 կետի պայմանը:

Պատվիրատու՝ ***ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն***

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 5
24.09.2016թ. կնքված N ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/8 գնման պայմանագրի

ք. Երևան 19.12.2018 թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա մի կողմից, և <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Գ. Արշակյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզի գ. Քուչակի մշակույթի տան ավարտման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 24.09.2016թ. կնքված N ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԾՁԲ-16/8 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին Պայմանագրի 14.02.2018թ. կնքված N 4 համաձայնագրի 1-ին կետում ավելացնել նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

<<1.1.3 2018 թվականի համար վճարման ենթակա գումարից մինչև 1534000 (մեկ միլիոն հինգ հարյուր երեսունչորս հազար) ՀՀ դրամի չափով՝ կանխավճարի ապահովման բանկային երաշխիք ներկայացնելուց հետո Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով՝ ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության ամբողջ գումարի չափով:>>:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	Կատարող՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<ՀՀ նախագծերի պետական
ք. Երևան, Հանրապետության	արտագերատեսչական
հրապարակ կառավարական տուն 3	փորձաքննություն>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	ք.Երևան, Հալաբյան 41 ա
աշխատակազմի գործառնական վարչություն	<<Արդշինբանկ>> ՓԲԸ <<Նաիրի>> մ/ճ
Հ/Հ 900011012607, ՀՎՀՀ 02565827	Հ/Հ 2473700277210010, ՀՎՀՀ 01508665
Գլխավոր քարտուղար՝	Գործադիր տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Գ.Արշակյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.